**Ամփոփ նյութ**

**«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Տեղեկացնում ենք, որ ներդրումային ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական պահանջների խախտումներ թույլ տալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը 01.03.2023 թվականի թիվ 1/06 ԾՕՀ-Ա որոշմամբ «ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշատակված որոշումը պարունակում է բանկային և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ հրապարկվում է միայն որոշման եզրափակիչ մասը:

Ստորև որոշման եզրափակիչ մասը.

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**
**ՈՐՈՇՈՒՄ**
**01.03.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/06 ԾՕՀ-Ա**
**«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել **նախազգուշացում՝ հետագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ իրականացնելու հանձնարարականով:**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության լիազորված անձին սահմանված կարգով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ** **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**